



**«ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**



**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
2008**

**«ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան

Սույն Արձանագրության Կողմ պետությունները,

համարելով, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ հռչակված սկզբունքների համաձայն՝ մարդկության ընտանիքի բոլոր անդամներին բնորոշ արժանապատվության և նրանց հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է,

նշելով, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով հռչակվում է, որ բոլոր մարդիկ իրենց արժանապատվության ու իրավունքների առումով ծնվում են ազատ և հավասար, և յուրաքանչյուր ոք օժտված է այդ հռչակագրում ամրագրված իրավունքներով ու ազատություններով՝ առանց որևէ տարբերակման հիմքի, ինչպես օրինակ՝ ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, դավանանքը, քաղաքական կամ այլ հայացքներ, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ,

վկայակոչելով, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և «Մարդու իրավունքների մասին» միջազգային դաշնագրով ճանաչվում է, որ վախից ու կարիքից զերծ մարդկային ազատ անհատի կատարելատիպին կարելի է հասնել միայն այնպիսի պայմաններ ստեղծելու դեպքում, որոնցում յուրաքանչյուր ոք կկարողանա իրականացնել իր քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքները,

վերահաստատելով մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանրությունը, անքակտելիությունը, փոխկախվածությունը և փոխկապվածությունը,

վկայակոչելով, որ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) յուրաքանչյուր Կողմ պետություն պարտավորվում է ինքնուրույն և միջազգային աջակցության ու համագործակցության միջոցով, հատկապես՝ տնտեսական և տեխնիկական բնագավառներում, իր առկա ռեսուրսների առավելագույն սահմաններում միջոցներ ձեռնարկել Դաշնագրով ճանաչված իրավունքների ամբողջական իրականացումն աստիճանական կերպով իրագործելու համար՝ բոլոր պատշաճ միջոցների գործադրմամբ, որոնք ներառում են հատկապես օրենսդրական միջոցների ընդունումը,

նկատի ունենալով, որ Դաշնագրի հետագա նպատակներին հասնելու և դրա

դրույթները կիրարկելու համար նպատակահարմար է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) հնարավորություն ընձեռել իրականացնելու սույն Արձանագրությամբ նախատեսված գործառույթները,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Կոմիտեի՝ հաղորդագրություններ ստանալու և քննարկելու իրավասությունը

1. Դաշնագրի այն Կողմ պետությունը, որը դառնում է սույն Արձանագրության Կողմ, ճանաչում է Կոմիտեի՝ սույն Արձանագրության դրույթներով նախատեսված կարգով հաղորդագրություններ ստանալու և քննարկելու իրավասությունը:

2. Կոմիտեի կողմից չպետք է ընդունվի ոչ մի այնպիսի հաղորդագրություն, որը վերաբերում է Դաշնագրի այն Կողմ պետությանը, որը սույն Արձանագրության Կողմ չէ:

Հոդված 2

Հաղորդագրությունները

Հաղորդագրությունները կարող են ներկայացվել Կողմ պետության իրավազորության ներքո գտնվող այն անհատների կամ անհատների խմբերի կողմից կամ նրանց անունից, որոնք պնդում են իրենց՝ այդ Կողմ պետության կողմից թույլ տրված՝ Դաշնագրով սահմանված տնտեսական, սոցիալական ու մշակութային որևէ իրավունքի խախտման զոհ լինելը: Հաղորդագրությունն անհատների կամ անհատների խմբերի անունից ներկայացվելու դեպքում այն ներկայացվում է այդ անձանց համաձայնությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրա հեղինակը հիմնավորում է նրանց անունից հանդես գալը՝ առանց այդպիսի համաձայնության:

Հոդված 3

Ընդունելիությունը

1. Կոմիտեն չպետք է քննարկի որևէ հաղորդագրություն, եթե չի հավաստիացել, որ բոլոր առկա ներպետական իրավական պաշտպանության միջոցները սպառված են: Այս սկզբունքը չի գործում այն դեպքերում, երբ այդպիսի իրավական պաշտպանության միջոցների կիրառումն անհարկի ձգձգվում է:

2. Կոմիտեն հայտարարում է հաղորդագրությունն անընդունելի այն դեպքում, երբ՝

ա) այն չի ներկայացվում ներպետական իրավական պաշտպանության միջոցներն սպառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ բացառությամբ այն

դեպքերի, երբ հեղինակն ապացուցում է հաղորդագրությունը նման ժամկետում ներկայացնելու անհնարինությունը,

բ) հաղորդագրության առարկա հանդիսացող փաստերը ի հայտ են եկել սույն Արձանագրությունը համապատասխան Կողմ պետության համար ուժի մեջ մտնելուց առաջ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ փաստերը դեռևս առկա են վերոհիշյալ ժամկետից հետո,

գ) նույն հարցն արդեն քննվել է Կոմիտեի կողմից կամ էլ արդեն իսկ քննվել կամ քննվում է միջազգային հետաքննության կամ հարցերի կարգավորման մեկ այլ ընթացակարգի շրջանակներում,

դ) այն անհամատեղելի է Դաշնագրի դրույթների հետ,

ե) այն ակնհայտորեն հիմնավորված չէ, բավարար չափով փաստարկված չէ կամ բացառապես հիմնված է զանգվածային լրատվամիջոցների տարածած հաղորդումների վրա,

զ) այն հաղորդագրություն ներկայացնելու իրավունքի չարաշահում է, կամ

է) այն ներկայացվել է անանուն կամ ոչ գրավոր:

Հոդված 4

Հստակ վնաս չմատնանշող հաղորդագրությունները

Կոմիտեն կարող է անհրաժեշտության դեպքում մերժել հաղորդագրության քննարկումն այն դեպքում, երբ դրանով չի մատնանշվում հեղինակի՝ հստակ վնաս կրած լինելու փաստը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կոմիտեն համարում է, որ հաղորդագրությամբ շոշափվում է ընդհանուր կարևորության լուրջ հարց:

Հոդված 5

Միջանկյալ միջոցները

1. Հաղորդագրությունն ստանալուց հետո՝ ցանկացած ժամանակ և մինչև ըստ էության որոշում կայացնելը, Կոմիտեն կարող է համապատասխան Կողմ պետության անհապաղ քննարկմանը ներկայացնել այնպիսի միջանկյալ միջոցներ ձեռնարկելու պահանջով դիմում, որոնք կարող են անհրաժեշտ լինել բացառիկ հանգամանքներում՝ ենթադրյալ խախտման զոհին կամ զոհերին հավանական անդառնալի վնասից զերծ պահելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված սեփական հայեցողական լիազորությունները Կոմիտեի կողմից իրականացվելը չի ենթադրում հաղորդագրության ընդունելիության կամ ըստ էության քննության վերաբերյալ որոշման կայացում:

Հոդված 6

Հաղորդագրության փոխանցումը

1. Կոմիտեն խորհրդապահական կերպով համապատասխան Կողմ պետության ուշադրությանն է ներկայացնում սույն Արձանագրության համաձայն իրեն ներկայացված ցանկացած հաղորդագրություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անընդունելի է համարում հաղորդագրությունը՝ առանց համապատասխան Կողմ պետությանը վկայակոչելու:

2. Ստացող Կողմ պետությունը վեց ամսվա ընթացքում գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ է ներկայացնում Կոմիտեին՝ պարզաբանելով հարցը և առկայության դեպքում՝ այն իրավական պաշտպանության միջոցները, որոնք կարող էին տրամադրվել այդ Կողմ պետության կողմից:

Հոդված 7

Բարեկամական կարգավորումը

1. Հարցերի բարեկամական կարգավորման նպատակով Կոմիտեն համապատասխան կողմերին ցուցաբերում է բարեկամական ծառայություններ՝ Դաշնագրով սահմանված պարտավորությունների պահպանման հիմքով:

2. Բարեկամական կարգավորման վերաբերյալ համաձայնության դեպքում սույն Արձանագրությամբ նախատեսված հաղորդագրության քննարկումն ավարտվում է:

Հոդված 8

Հաղորդագրության քննությունը

1. Կոմիտեն սույն Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն ստացված հաղորդագրությունները քննության է առնում իրեն ներկայացված բոլոր փաստաթղթերի լույսի ներքո՝ պայմանով, որ այդ փաստաթղթերը փոխանցվել են համապատասխան կողմերին:

2. Սույն Արձանագրությամբ նախատեսված հաղորդագրությունները քննելիս Կոմիտեն անց է կացնում դռնփակ նիստեր:

3. Սույն Արձանագրությամբ նախատեսված ցանկացած հաղորդագրություն քննելիս Կոմիտեն կարող է անհրաժեշտության դեպքում օգտվել համապատասխան այնպիսի փաստաթղթերից, որոնք սկիզբ են առնում Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմիններից, մասնագիտացված գործակալություններից, հիմնադրամներից, ծրագրերից և կառուցակարգերից, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝ մարդու իրավունքների տարածաշրջանային

համակարգերից, ինչպես նաև համապատասխան Կողմ պետության ցանկացած դիտարկումից ու մեկնաբանությունից:

4. Սույն Արձանագրությամբ նախատեսված հաղորդագրությունները քննելիս Կոմիտեն ուսումնասիրում է Կողմ պետության կողմից Դաշնագրի II մասին համապատասխան ձեռնարկված քայլերի ողջամտությունը: Դրանով Կոմիտեն նկատի է ունենում, որ Կողմ պետությունը կարող է ընդունել քաղաքականության հետ կապված մի շարք հավանական միջոցներ՝ Դաշնագրով սահմանված իրավունքների իրականացման համար:

Հոդված 9

Կոմիտեի նկատառումներին հաջորդող հետագա քայլերը

1. Հաղորդագրության քննությունից հետո Կոմիտեն համապատասխան կողմերին փոխանցում է հաղորդագրության վերաբերյալ իր նկատառումները իր առաջարկությունների հետ միասին՝ դրանց առկայության դեպքում:

2. Կողմ պետությունն առկայության դեպքում պատշաճ կերպով ուսումնասիրում է Կոմիտեի նկատառումներն ու առաջարկությունները և վեց ամսվա ընթացքում Կոմիտեին ներկայացնում է գրավոր պատասխան, այդ թվում՝ Կոմիտեի նկատառումների ու առաջարկությունների լույսի ներքո ձեռնարկված ցանկացած գործողության վերաբերյալ տեղեկություն:

3. Կոմիտեն կարող է Կողմ պետությանը հրավիրել՝ ներկայացնելու լրացուցիչ տեղեկություն՝ վերջինիս կողմից Կոմիտեի նկատառումներին ու առաջարկություններին ի պատասխան ձեռնարկված ցանկացած միջոցի մասին՝ դրանց առկայության դեպքում, ներառյալ Դաշնագրի 16-րդ և 17-րդ հոդվածներով նախատեսված՝ Կողմ պետության հետագա զեկույցներում՝ Կոմիտեի կողմից նպատակահարմար համարվելու դեպքում:

Հոդված 10

Միջպետական հաղորդագրությունները

1. Սույն Արձանագրության Կողմ պետությունը կարող է, սույն հոդվածի համաձայն, ցանկացած ժամանակ հայտարարել, որ ճանաչում է Կոմիտեի՝ այնպիսի հաղորդագրություններ ստանալու և քննարկելու իրավասությունը, որոնցով Կողմ պետությունը պնդում է, որ մեկ այլ Կողմ պետություն չի կատարում Դաշնագրով նախատեսված իր պարտավորությունները: Սույն հոդվածով նախատեսված հաղորդագրությունները կարող են ստացվել և քննարկվել միայն այն դեպքում, երբ դրանք ներկայացվել են այնպիսի Կողմ պետության կողմից, որն արել է հայտարարություն, որով ընդունում է, որ Կոմիտեի իրավասությունը տարածվում է իր

վրա: Կոմիտեն ոչ մի հաղորդագրություն չպետք է ստանա այն դեպքում, երբ այն վերաբերում է այդպիսի հայտարարություն չարած Կողմ պետությանը: Սույն հոդվածի համաձայն ստացված հաղորդագրությունները քննվում են հետևյալ ընթացակարգին համապատասխան.

ա) եթե սույն Արձանագրության Կողմ պետությունը համարում է, որ մեկ այլ Կողմ պետություն չի կատարում Դաշնագրով նախատեսված իր պարտավորությունները, նա կարող է տվյալ հարցը գրավոր հաղորդագրությամբ ներկայացնել այդ Կողմ պետության ուշադրությանը: Կողմ պետությունը կարող է տվյալ հարցի մասին հայտնել նաև Կոմիտեին: Հաղորդագրությունն ստանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, ստացող պետությունը հաղորդագրությունն ուղարկող պետություն է ներկայացնում բացատրություն կամ այլ գրավոր հայտարարություն՝ պարզաբանելով համապատասխան հարցը, որը հնարավորության ու վերաբերելիության սահմաններում պետք է ներառի հղում տվյալ հարցի մասով ձեռնարկված, ակնկալվող կամ առկա ներպետական ընթացակարգերին և իրավական պաշտպանության միջոցներին,

բ) եթե ստացող պետության կողմից նախնական հաղորդագրությունն ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, համապատասխան հարցը չի կարգավորվում տվյալ երկու Կողմ պետությունների համար ընդունելի տարբերակով, ապա պետություններից յուրաքանչյուրն իրավասու է հարցը փոխանցել Կոմիտեին՝ այդ մասին ծանուցելով Կոմիտեին եւ մյուս պետությանը,

գ) Կոմիտեն քննում է իրեն փոխանցված հարցը միայն այն բանից հետո, երբ հավաստիանում է, որ տվյալ հարցի մասով առկա բոլոր ներպետական իրավական պաշտպանության միջոցները վկայակոչվել են ու սպառվել: Այս սկզբունքը չի գործում այն դեպքերում, երբ այդպիսի իրավական պաշտպանության միջոցների կիրառումն անհիմն ձգձգվում է,

դ) պահպանելով սույն կետի «գ» ենթակետի դրույթները՝ Կոմիտեն հարցի բարեկամական լուծման նպատակով համապատասխան Կողմ պետություններին տրամադրում է բարեկամական ծառայություններ՝ Դաշնագրով սահմանված պարտավորությունների պահպանման հիմքով,

ե) սույն հոդվածով նախատեսված հաղորդագրությունները քննելիս Կոմիտեն անցկացնում է դռնփակ նիստեր,

զ) սույն կետի «բ» ենթակետի համաձայն իրեն փոխանցված ցանկացած հարցի մասով Կոմիտեն կարող է «բ» ենթակետով նախատեսված համապատասխան Կողմ պետություններին ցանկացած վերաբերելի տեղեկություն տրամադրելու կոչ անել,

է) սույն կետի «բ» ենթակետով նախատեսված համապատասխան Կողմ պետություններն իրավունք ունեն ներկայացված լինելու Կոմիտեի կողմից հարցի

քննարկման ժամանակ ու բանավոր և (կամ) գրավոր հայտարարություններ անելու,

ը) Կոմիտեն սույն կետի «բ» ենթակետով նախատեսված ծանուցումն ստանալու օրվանից հետո իր համար նպատակահարմար եղանակով ներկայացնում է զեկույց հետևյալի մասին.

i) եթե լուծում է տրվում սույն կետի «դ» ենթակետով նախատեսված պայմաններին համապատասխան, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերի և տրված լուծման համառոտ շարադրանքով,

ii) եթե լուծում չի տրվում «դ» ենթակետով նախատեսված պայմաններին համապատասխան, ապա Կոմիտեն իր զեկույցում նշում է համապատասխան Կողմ պետությունների միջև ծագած հարցի մասով վերաբերելի փաստերը: Համապատասխան Կողմ պետությունների կողմից ներկայացված գրավոր հայտարարությունները և բանավոր հայտարարությունների արձանագրությունը կցվում են զեկույցին: Կոմիտեն կարող է նաև միայն համապատասխան Կողմ պետություններին փոխանցել այնպիսի նկատառումներ, որոնք կարող է վերաբերելի համարել նրանց միջև ծագած հարցի առնչությամբ:

Յուրաքանչյուր հարցի դեպքում զեկույցը փոխանցվում է համապատասխան Կողմ պետություններին:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն արված հայտարարությունը Կողմ պետությունների կողմից ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, որը դրա պատճենները փոխանցում է մյուս Կողմ պետություններին: Հայտարարությունը կարող է ցանկացած ժամանակ հետ վերցվել գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Հայտարարությունը հետ վերցնելը չպետք է սահմանափակի այնպիսի հարցի ուսումնասիրությունը, որը, սույն հոդվածի համաձայն, արդեն իսկ փոխանցված հաղորդագրության առարկա է. հայտարարությունը հետ վերցնելու մասին ծանուցումը գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց հետո սույն հոդվածի շրջանակներում որևէ Կողմ պետությունից որևէ այլ հաղորդագրություն չի ստացվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան Կողմ պետությունը նոր հայտարարություն է արել:

Հոդված 11

Քննության անցկացման ընթացակարգը

1. Սույն Արձանագրության Կողմ պետությունը ցանկացած ժամանակ կարող է հայտարարել, որ ճանաչում է Կոմիտեի՝ սույն հոդվածով նախատեսված

իրավասությունը:

2. Եթե Կոմիտեն ստանում է հավաստի տեղեկություն՝ Կողմ պետության կողմից Դաշնագրով սահմանված՝ տնտեսական, սոցիալական և մշակութային որևէ իրավունքի կոպիտ կամ պարբերական խախտումների մասին, ապա հրավիրում է այդ Կողմ պետությանը՝ համագործակցելու տեղեկատվության ուսումնասիրության գործում և այդ նպատակով ներկայացնելու համապատասխան տեղեկատվության վերաբերյալ դիտարկումներ:

3. Հաշվի առնելով համապատասխան Կողմ պետության ներկայացրած ցանկացած դիտարկում, ինչպես նաև իրեն հասանելի ցանկացած այլ հավաստի տեղեկություն՝ Կոմիտեն կարող է նշանակել իր մեկ կամ ավելի անդամների՝ անցկացնել քննություն և հրատապ զեկուցել իրեն: Հիմնավորված լինելու դեպքում և Կողմ պետության համաձայնությամբ տվյալ քննությունը կարող է նաև ներառել նրա տարածք կատարվող այցելություն:

4. Այսպիսի քննությունն անցկացվում է խորհրդապահական կերպով, և վարույթի բոլոր փուլերում ապահովվում է Կողմ պետության համագործակցությունը:

5. Այդպիսի քննության արդյունքներն ուսումնասիրելուց հետո Կոմիտեն այդ արդյունքները մեկնաբանությունների և առաջարկությունների հետ միասին փոխանցում է համապատասխան Կողմ պետությանը:

6. Համապատասխան Կողմ պետությունը Կոմիտեի փոխանցած արդյունքները, մեկնաբանությունները և առաջարկություններն ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, իր դիտարկումները ներկայացնում է նրան:

7. Սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան անցկացված քննության մասով այդպիսի վարույթի ավարտից հետո Կոմիտեն կարող է համապատասխան Կողմ պետության հետ խորհրդակցելուց հետո որոշել սույն Արձանագրության 15-րդ հոդվածով նախատեսված իր տարեկան զեկույցում ներառել վարույթի արդյունքների մասին համառոտ հաշվետվություն:

8. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն հայտարարություն արած ցանկացած Կողմ պետություն կարող է ցանկացած ժամանակ հետ վերցնել այդ հայտարարությունը գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով:

Հոդված 12

Քննության գործընթացին հաջորդող հետագա քայլերը

1. Կոմիտեն կարող է համապատասխան Կողմ պետությանը հրավիրել, որ վերջինս Դաշնագրի 16-րդ եւ 17-րդ հոդվածների համաձայն ներկայացված իր

զեկույցում ընդգրկի մանրամասներ՝ սույն Արձանագրության 11-րդ հոդվածի համաձայն անցկացված քննությանն ի պատասխան ձեռնարկված ցանկացած միջոցի մասին:

2. Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է 11-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված վեցամսյա ժամկետի ավարտից հետո համապատասխան Կողմ պետությանը հրավիրել, որ նա իրեն տեղեկացնի այդպիսի քննությանն ի պատասխան ձեռնարկված միջոցների մասին:

Հոդված 13

Պաշտպանության միջոցները

Կողմ պետությունը ձեռնարկում է բոլոր պատշաճ միջոցները՝ երաշխավորելու համար, որ իր իրավազորության ներքո գտնվող անհատները չենթարկվեն վատ վերաբերմունքի կամ ահաբեկման որևէ ձևի՝ սույն Արձանագրության համաձայն Կոմիտեի հետ իրականացվող հաղորդակցման հետևանքով:

Հոդված 14

Միջազգային աջակցությունը և համագործակցությունը

1. Կոմիտեն նպատակահարմար գտնելու դեպքում և համապատասխան Կողմ պետության համաձայնությամբ Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալություններին, հիմնադրամներին և ծրագրերին, ինչպես նաև այլ իրավասու մարմինների է փոխանցում տեխնիկական խորհրդատվության կամ աջակցության անհրաժեշտությունը մատնանշող հաղորդագրությունների և անցկացվող քննության վերաբերյալ իր կարծիքները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում այդ կարծիքների կամ առաջարկությունների վերաբերյալ Կողմ պետության դիտարկումների ու առաջարկների հետ միասին:

2. Կոմիտեն կարող է նաև համապատասխան Կողմ պետության համաձայնությամբ այդ մարմինների ուշադրությանը ներկայացնել սույն Արձանագրության շրջանակներում քննարկվող հաղորդագրություններից ծագող ցանկացած այնպիսի հարց, որը կարող է օգնել նրանցից յուրաքանչյուրին՝ իր իրավասության ոլորտում որոշում կայացնելու այն միջազգային միջոցների նպատակահարմարության վերաբերյալ, որոնք ամենայն հավանականությամբ կարող են օգնել Կողմ պետություններին առաջընթաց արձանագրել Դաշնագրով ճանաչված իրավունքների կիրարկման հարցում:

3. Գլխավոր ասամբլեայի համապատասխան ընթացակարգերին համապատասխան՝ ստեղծվում է հավատարմագրային հիմնադրամ, որը կառավարվում է Միավորված ազգերի կազմակերպության ֆինանսական

կանոնակարգերին և կանոններին համապատասխան՝ Դաշնագրում նշված իրավունքների առավել ընդլայնված կիրարկման նպատակով համապատասխան Կողմ պետությունների համաձայնությամբ Կողմ պետություններին փորձագիտական և տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համար՝ այդպիսով նպաստելով սույն Արձանագրության համատեքստում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում ազգային կարողությունների զարգացմանը:

4. Սույն հոդվածի դրույթները չեն սահմանափակում որևէ Կողմ պետության պարտավորությունը՝ կատարելու Դաշնագրով նախատեսված իր պարտավորությունները:

Հոդված 15 Տարեկան զեկույց

Կոմիտեն իր տարեկան զեկույցում ներառում է սույն Արձանագրությամբ նախատեսված իր գործունեության մասին ամփոփ տեղեկություններ:

Հոդված 16 Տարածումը և տեղեկատվությունը

Յուրաքանչյուր Կողմ պետություն պարտավորվում է լայնորեն իրազեկել ու տարածել Դաշնագիրն ու սույն Արձանագրությունը, ինչպես նաև դյուրացնել Կոմիտեի նկատառումների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը, մասնավորապես՝ տվյալ Կողմ պետությանը վերաբերող հարցերի մասով, և դա իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով:

Հոդված 17 Ստորագրումը, վավերացումը և միացումը

1. Սույն Արձանագրությունը բաց է Դաշնագիրն ստորագրած, վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության ստորագրման համար:

2. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության կողմից: Վավերագրերը ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

3. Սույն Արձանագրությունը բաց է Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության միանալու համար:

4. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված

ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

Հոդված 18
Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման կամ միանալու մասին տասներորդ փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:

2. Վավերացման կամ միանալու վերաբերյալ տասներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Արձանագրությունը վավերացնող կամ դրան միացող յուրաքանչյուր պետության համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:

Հոդված 19
Փոփոխությունները

1. Ցանկացած Կողմ պետություն կարող է առաջարկել փոփոխություն կատարել սույն Արձանագրության մեջ և այն ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը ցանկացած առաջարկվող փոփոխության մասին հաղորդում է Կողմ պետություններին՝ առաջարկությունները քննարկելու և դրանց վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով Կողմ պետությունների հանդիպում անցկացնելուն կողմ լինելու կամ չլինելու վերաբերյալ իրեն ծանուցելու պահանջով: Այդպիսի հաղորդագրության օրվանից չորս ամսվա ընթացքում Կողմ պետությունների առնվազն մեկ երրորդի կողմից այդպիսի հանդիպում անցկացնելուն կողմ լինելու դեպքում գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո հանդիպում է հրավիրում: Անցկացվող հանդիպմանը ներկա գտնվող և քվեարկող Կողմ պետությունների երկու երրորդ մեծամասնությամբ ընդունված ցանկացած փոփոխություն գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվում է Գլխավոր ասամբլեայի հաստատմանը, իսկ այնուհետև՝ բոլոր Կողմ պետությունների ընդունմանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված և հաստատված փոփոխությունն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին ի պահ հանձնված փաստաթղթերի թիվը փոփոխության ընդունման օրվա դրությամբ Կողմ պետությունների ընդհանուր թվի երկու երրորդին հասնելուց հետո՝ երեսուներորդ օրը: Այնուհետև ցանկացած Կողմ պետության համար փոփոխությունն ուժի մեջ է մտնում ընդունելու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելուն հաջորդող

երեսուներորդ օրը: Փոփոխությունը պարտադիր է միայն այն ընդունած Կողմ պետությունների համար:

Հոդված 20 **Գործողության դադարեցումը**

1. Ցանկացած Կողմ պետություն կարող է ցանկացած ժամանակ իր համար դադարեցնել սույն Արձանագրության գործողությունը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին: Գործողության դադարեցումն ուժի մեջ է մտնում ծանուցումը գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից վեց ամիս հետո:

2. Գործողության դադարեցումը չի սահմանափակում մինչև այն ուժի մեջ մտնելը 2-րդ և 10-րդ հոդվածների համաձայն ներկայացված ցանկացած հաղորդագրության կամ 11-րդ հոդվածի համաձայն նախաձեռնված ցանկացած ընթացակարգի նկատմամբ սույն Արձանագրության դրույթների շարունակական կիրառումը:

Հոդված 21 **Գլխավոր քարտուղարի ծանուցումները**

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը Դաշնագրի 26-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված բոլոր պետություններին ծանուցում է հետևյալի մասին.

ա) սույն Արձանագրության համաձայն՝ ստորագրումների, վավերացումների ու միանալու մասին,

բ) սույն Արձանագրության և 19-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած փոփոխության՝ ուժի մեջ մտնելու օրվա մասին,

գ) 20-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած գործողության դադարեցման մասին:

Հոդված 22 **Պաշտոնական լեզուները**

1. Սույն Արձանագրությունը, որի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվներ:

2. Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության հաստատված պատճենները փոխանցում է Դաշնագրի 26-րդ հոդվածով սահմանված բոլոր պետություններին:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2008թ. դեկտեմբերի 10-ին ստորագրված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**